## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## 2022-2023 ուսումնական տարվա
## բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների կատարած աշխատանքների

Ավանդական բժշկության համալսարանը 2022-23 ուսումնական տարում «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների գծով պատրաստել է բժշկական կադրեր՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով:

2022-23 ուս.տարում համալսարանում սովորել են և հայազգի, և օտարազգի ուսանողներ: Համալսարանում դասավանդումն իրականացվել է հայերենով և անգլերենով:

2022-23 ուսումնական տարում դեկանի աշխատանքները կազմակերպվել են աշխատանքային պլանին համապատասխան:

1. 2021-22 ուսումնական տարվա համեմատ, հաշվետու տարում ավելացել է համալսարանում հայազգի սովորողների թվաքանակը պայմանավորված այն հանգամանքի հետ, որ բժշկական քոլեջները բարձր գնահատականներով ավարտած թվով 26 դիմորդներ ընդունվեցին բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների երկրորդ կուրսեր համաձայն ԿԳՄՍ նախարարության 12.055.2022թ. թիվ 05/11.2/10656-2022 գրության:

Հաշվետու տարում ավելացել է նաև համալսարանում օտարերկրյա սովորողների թվաքանակը: 2022-23 ուստարում ևս ընդլայնվել է Համալսարանի ուսանողների աշխարհագրական շրջանակը: Այսպիսով, հաշվետու ուսումնական տարում համալսարանում սովորել են ուսանողներ Հայաստանից, Հնդկաստանից, Իրաքից, Իրանից, Գերմանիայից, Իռլանդիայից, Մեծ Բրիտանիայից, Հորդանանից, Շվեդիայից, Ուկրաինայից, Շրի Լանկայից, Ֆիլիպիններից, հաշվետու տարում նաև՝ Վանուատուից, Գանայից, Եգիպտոսից, Սիրայից, Իտալիայից:

Ինչպես նախորդ տարիներին, 2022-23 ուստարում ևս, ցավոք, հայ ուսանողների ընդունելություն առաջին կուրսերում չենք ունեցել:

2. 2022-23 ուսումնական տարվա բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով տարեսկզբին սովորել են թվով 618 /նախորդ ուստարի 400/, իսկ տարեվերջին 578 /նախորդ ուստարի 530/ ուսանող /119 ավարտած/:

Աղյուսակ 1

2022-2023 ուս. տարի

### ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

| Բուժական ֆակուլտետ | | | | Ստոմատոլոգիական ֆակուլտետ | | | | Ընդամենը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կուրս | Տարեսկ. | Տարեվերջ | Շրջանավ. | Կուրս | Տարեսկ. | Տարեվ. | Շրջանավ. | Տարեսկ. | Տարեվ. | Շրջանավ. |
| I | 97 | 87 | | I | 13 | 12 | | 110 | 99 | |
| II | 99 | 74 | | II | 29 | 18 | | 127 | 92 | |
| III | 54 | 64 | | III | 14 | 10 | | 68 | 74 | |
| IV | 106 | 109 | | IV | 3 | 3 | | 109 | 112 | |
| V | 83 | 82 | | V | 51 | 51 | 51 | 134 | 133 | 51 |
| VI | 70 | 68 | 68 | - | - | - | - | 70 | 68 | 68 |
| Ընդամ. | 509 | 484 | 68 /66շրջ.+ 2-ը չավարտ/ | | 110 | 94 | 51 | 619 | 578 | 119 շրջ.+ 2-ը չավարտած/ |

Ծանոթություն.

1.Տարեսկզբի հաշվարկն արված է սեպտեմբերի սկիզբը և I կուրսը ներառված

3. Տարեվերջի հաշվարկն արված է՝ շրջանավարտները ներառված:

2022-23 ուսումնական տարվա ընթացքում բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում ուսանողների շարժն ունի հետևյալ պատկերը՝

Աղյուսակ 2

2022-23 ուս.տարի

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺ

| Ֆակուլտետ | Հեռացում | Ազատում | Տարկետում | Տեղափոխում ստոմ/բուժ. ֆակ. | Տեղափոխում ստոմ/բուժ. ֆակ.-ից | Վերականգ. | Ընդունում այլ բուհից տեղափ. | Հրաժարել կրկնակի սովորելուց, |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բուժական | 51 | 22 | - | - | - | 1 | 91 | 4 |
| Ստոմատոլոգիական | 7 | 11 | - | - | - | 1 | 17 | - |
| Ընդամենը | 58 | 33 | | | | 2 | 108 | 4 |

3. Հաշվետու տարում ժամանակին կազմվել, ռեկտորատում հաստատվել են և սոցիալական տարբեր հարթակներով /էլեկտրոնային տարբերակով և ֆեյսբուքյան համալսարանական էջով, ինչպես նաև համալսարանի համապատասխան ցուցանակում տեղադրվելով շահակիցներին հասանելի են եղել են երկու ֆակուլտետների ուսումնական տարվա ուսումնական օրացույցները, աշնանային և գարնանային կիսամյակների դասացուցակները, միջանկյալ ստուգումների, քննաշրջանների, լուծարքների, ուսումնաարտադրական պրակտիկաների, ակադեմիական տարբերությունների հանձնման ժամանակացույցները:

2022-23 ուսումնական տարվա ձմեռային և ամառային քննաշրջանների, լուծարքների ժամանակացույցները մինչ ռեկտորատում հաստատելը, նախապես համաձայնեցվել են ուսանողների հետ:

4. 2022-23 ուսումնական տարում 2 կիսամյակների ընթացքում կայացել են համալսարանի ամբիոնների նիստեր, որտեղ քննարկվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը տվյալ ամբիոնում, վերլուծվել են ուսանողների առաջադիմության արդյունքները, լուծարքների արդյունքները, վերհանվել են որոշ խնդիրներ՝ կապված ուսումնաարտադրական պրակտիկայի, գնահատման համակարգի, ուսանողների գործնական հմտությունների և կարողությունների բարելավման և այլ հարցերի հետ:

2022-23 ուսումնական տարում պատշաճ կերպով ամբիոններում կազմակերպվել են առարկայական խորհրդատվություններ:

5. Հաշվետու տարում դեկանի, Արտաքին կապերի բաժնի մասնագետների և կուրսերի խորհրդատուների կողմից բազմիցս կազմակերպվել են անհատական հանդիպում-զրույցներ՝ ինչպես ցածր առաջադիմություն ունեցող, բացակայող ուսանողների հետ, բացատրությունների միջոցով տարվել են համապատասխան աշխատանքներ, այնպես էլ ուսանողների միջև միջանձնային հարաբերությունների, դասախոս- ուսանող հարաբերությունների, ուսման վարձի, առողջական խնդիրների և այլ հարցերի հետ կապված :

6. Հաշվետու ուստարվա երկու կիսամյակների ընթացքում, համապատասխան կուրսի խորհրդատուի, ուսումնական մասի վարիչի, ուսանողական խորհրդի նախագահի հետ միասին բոլոր կուրսերում անցկացվել են խորհրդակցություններ, որտեղ քննարկվել են ֆակուլտետների կուրսերի առաջադիմությունը, հաճախումների վիճակը:

- Կազմակերպվել են 2022-23 ուստարվա ձմեռային և ամառային քննաշրջանները, լուծարքները և վերահսկվել են դրանց ընթացքը:

➢ 2022-23 ուս. տարվա ամառային քննաշրջանում բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում միասին, կազմակերպվել և անցկացվել են ստուգարքային և քննական թվով 102 առարկաներից **59** ստուգարք /բուժ.25, ստոմ. 34 / և **43** քննություն /բուժ. 24, ստոմ.19/:

➢ 2022-23 ուս. տարվա ձմեռային քննաշրջանում բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում միասին, կազմակերպվել և անցկացվել են ստուգարքային և քննական թվով 100 առարկաներից՝ 69 ստուգարք /բուժ.34, ստոմ. 35 / և 31 քննություն /բուժ. 17, ստոմ.14/:

Աղյուսակ 3

**2022-23 ՈՒՍ.ՏԱՐԻ**
**ԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ**
**ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ**

| Ֆակուլտետ | Ձմեռային քննաշրջան | | Ամառային քննաշրջան | | Տարեկան | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ստուգ. | Քննութ. | Ստուգ. | Քննութ. | Ստուգ. | Քննութ. |
| Բուժական | **34** / ըստ խմբ138. | **17**/ ըստ խմբ.72 | **25** /ըստ խմբ. 95 | **24**/ըստ խմբ. 67/ | **59**/ըստ խմբ.233 | **41**/ըստ խմբ. 139/ |
| Ստոմատ. | **35** / ըստ խմբ.56 | **14** /ըստ խմբ 23. | **34** /ըստ խմբ.60 | **19**/ըստ խմբ.29 / | **69**/ըստ խմբ.116 | **33**/ըստ խմբ.52 |
| Ընդամենը | **69** ըստ խմբ. 194 | **31** /ըստ խմբ. 95/ | **59**/ըստ խմբ.155 | **43**/ըստ խմբ. 96/ | 128 /ըստ խմբ.349 | **74** ըստ.խմբ.191 |

7. 2022-23 ուսումնական տարվա քննաշրջաններից առաջ և հետո երկու ֆակուլտետների բոլոր կուրսերում կազմակերպվել են կուրսային խորհրդակցություններ, որոնցում քննարկվել են քննաշրջանների հետ կապված քննաշրջանների ժամանակացույցների, ուսումնաարտադրական պրակտիկաների, լուծարքների հետ կապված կազմակերպչական և այլ հարցեր:

Քննությունների ավարտից հետո, խորհրդակցությունների ժամանակ վերլուծվել են տվյալ կուրսի քննաշրջանի արդյունքները, հատկապես բարձրացվել է ակադեմիական պարտքեր ունեցողների հարցը: Քննություններից առաջ բոլոր քննական առարկաներից դասախոսներն անցկացրել են առարկայական խորհրդատվություններ:

8. Հաշվետու տարում գիտխորհրդին են ներկայացվել ձմեռային և ամառային քննաշրջանների հետ կապված առաջադիմության և լուծարքների արդյունքները:

❖ 2022-23 ուսումնական տարում Բուժական ֆակուլտետում ձմեռային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմել է *83.0*%, իսկ որականը՝ *58.0*%:

✓ Ձմեռային քննաշրջանում ակադեմիական պարտքերի քանակը բուժական ֆակուլտետում կազմել է 690 /անբավարար՝ 339 և չներկայացած՝ 351/, որից լուծարքների ժամանակ մարվել են 395-ը :

✓ 2022-23 ուսումնական տարում Բուժական ֆակուլտետում ամառային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմել է *88,3*%%, իսկ որակականը՝ *61,0*%:

Ակադեմիական պարտքերի քանակը ամառային քննաշրջանում կազմել է 355 /անբավարար՝ 190 և չներկայացած՝ 165/, որից լուծարքների ժամանակ մարվել են 124-ը, 231-ը չի մարվել:

Աղյուսակ 4

2022-23 ուս. տարի
ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Ձմեռային և ամառային քննաշրջանների
ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

| Կուրս, խումբ | Ձմեռային քննաշրջան | | Ամառային քննաշրջան | | Տարեկան առաջադիմություն | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդհ. առաջ.% | Որակ. առաջ.% | Ընդհ. առաջ.% | Որակ. Առաջ.% | Ընդհ. Առաջ.% | Որակ. Առաջ.% |
| 101խ. | 95.1 | 74.6 | 91,6 | 76,0 | 93,4 | 75,3 |
| 102խ. | 88.9 | 55,0 | 85,4 | 60,0 | 87,2 | 57,5 |
| 103խ. | 90.3 | 45,0 | 81,5 | 47,7 | 86,0 | 46,4 |
| 104խ | 72.5 | 37,0 | 65,0 | 36,0 | 69,0 | 36,5 |
| I | 86.7 | 52.9 | 81,0 % | 55,0 % | 84,0% | 54,0 % |
| 201խ. | 77.6 | 55.0 | 79,2 | 61,0 | 78,4 | 58,0 |
| 202խ. | 75.5 | 30.5 | 66,2 | 35,6 | 71,0 | 33,0 |
| 203խ. | 67.5 | 27.0 | 69,0 | 32,5 | 67,0 | 30,0 |
| 204խ | 77.4 | 67.0 | 77,7 | 59,0 | 77,6 | 63,0 |
| 205խ | 90.5 | 59.0 | | | 90,5 | 59,0 |
| II | 77.7 | 47.7 | 73,0 % | 47,0 % | 77,0% | 47,0% |
| 301խ. | 72.3 | 51.0 | 84,5 | 58,4 | 78,4 | 55,0 |
| 302խ. | 87.0 | 50.0 | 88,0 | 68,0 | 87,5 | 59,0 |
| 303խ. | 62.5 | 32.0 | 82,0 | 59,4 | 72,3 | 46,0 |
| III | 73.9 | 44.3 | 85,0 % | 62,0 % | 79,4% | 53,3% |
| 401խ. | 77.0 | 57.2 | 96,4 | 74,0 | 87,0 | 66,0 |
| 402խ. | 93.0 | 72.2 | 94,4 | 68,3 | 94,0 | 70,1 |
| 403խ. | 82.0 | 60.5 | 98,0 | 44,1 | 90,0 | 52,3 |
| 404խ. | 82.0 | 64.0 | 97,6 | 53,6 | 90,0 | 59,0 |
| 405խ. | 74.0 | 56.4 | 98,7 | 58,4 | 86,4 | 57,4 |
| IV | 81.6 | 62.06 | 97.0 % | 60,0 % | 89,1% | 61,0 % |
| 501խ. | 98.0 | 85.4 | 100 | 98,2 | 99,0 | 91,5 |
| 502խ. | 97.0 | 83.0 | 97,8 | 94,5 | 97,4 | 88,8 |
| 503խ. | 91.1 | 70.0 | 92,0 | 77,0 | 92,0 | 74,0 |
| 504խ. | 91.3 | 75.4 | 85,0 | 68,4 | 88,0 | 72,0 |
| 505խ. | 95.0 | 78.0 | 96,0 | 68,2 | 95,5 | 73,1 |
| V | 94.5 | 78.4 | 94,2% | 81,3 % | 94,4% | 80,0 % |
| 601 | 94.2 | 77.0 | 100 | 67,6 | 97,1 | 72,3 |
| 602 | 91.0 | 70.0 | 100 | 62,3 | 95,5 | 66,2 |
| 603 | 66.0 | 43.5 | 98,7 | 53,0 | 82,4 | 48,3 |
| VI | 83.7 | 63.5 | 99,6% | 61,0 % | 92,0 % | 62,3% |
| Ընդամենը | 83.0 | 58.0 | 88,3% | 61,0 % | 86,0% | 60,0% |

Աղյուսակ 5

2022-2023 ՈՒՍ.ՏԱՐԻ
ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՔԱՆԱԿ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

| Ֆակուլտետ | Ձմեռային քննաշրջան | | Ամառային քննաշրջան | |
|---|---|---|---|---|
| | Անբավ./Չներկ. | Հանձ./Չհանձ. | Անբավ./ չներկ. | Հանձ./Չհանձ. |
| Բուժական | 339/351 | 392/256 | 190/165 | 124/231 |

✓ Այսպիսով, Բուժական ֆակուլտետում 2021-22ուս.տարվա համեմատությամբ / *88,2* %, ընդհանուր, 62,9% որակական / 2022-23 ուս.տարվա տարեկան առաջադիմությունը կազմել է **86,0%** որակականը՝ 60,0%/, և ընդհանուր, որակական առաջադիմությունները, մնացել են նույն տիրույթում /աննշան նվազել են/:

Նախորդ ուսումնական տարվա նման, այս տարի ևս համեմատաբար ցածր ընդհանուր առաջադիմություն է գրանցվել երկրորդ /77,0%/, երրորդ կուրսերում /79,0%/: Առավել բարձր ընդհանուր առաջադիմություն է գրանցվել 5-րդ /94,0/ 6-րդ /92,0/, 4-րդ /89,1// կուրսերում, որակական առաջադիմությունը բարձր է 5-րդ կուրսում /80,0 % /:

➢ Բուժական ֆակուլտետի 2022-23 ուստարվա ձմեռային և ամառային քննաշրջաններում, համաձայն «Գիտելիքների ստուգման և գնահատման» կանոնակարգի, ըստ կուրսերի կազմակերպվել են և անցկացվել են նախորդ կիսամյակներից մնացած պարտքերի վերահանձնումները՝

✓ Ձմեռային քննաշրջանում նախորդ՝ 2021-22 ուստարվա ամառային քննաշրջանից ակադեմիական պարտք մնացած առարկաներից անցկացվել են 9 ստուգարք և 16 քննություն, որոնց ժամանակ մարվել են թվով 50 ակադեմիական պարտքեր, իսկ չհանձնած 52 ակադեմիական պարտքերը հեռացված ուսանողներինն են:

✓ Ամառային քննաշրջանում՝ 2022-23 ուստարվա ձմեռային քննաշրջանից ակադեմիական պարտք մնացած առարկաներից անցկացվել են 14 ստուգարք և 18 քննություն, որոնց ժամանակ մարվել են թվով 129 ակադեմիական պարտքեր, իսկ չհանձնած 27 ակադեմիական պարտքերը հեռացված ուսանողներինն են:

Աղյուսակ 6

2022-2023 ՈՒՍ.ՏԱՐԻ
ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Նախորդ կիսամյակներից մնացած ակադեմիական պարտքերի վերահանձնումների արդյունքներ

| Ֆակուլտետ | Ձմեռային քննաշրջան 2021-22 ամառային քնն-ից պարտք | | Ամառային քննաշրջան 2022-23 ձմեռային քնն-ից պարտք | |
|---|---|---|---|---|
| | Ակ. պարտք | Հանձ./Չհանձ. | Ակ. պարտք | Հանձ./Չհանձ. |
| Բուժական | 101 | 50 / 52 | 156 | 129 / 27 |

❖ 2022-23 ուսումնական տարում Ստոմատոլոգիական ֆակուլտետում ձմեռային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմել է *86.7*%% %, իսկ որակականը՝ *59.6* %:

✓ Ձմեռային քննաշրջանի ակադեմիական պարտքերի քանակը կազմել է 138 /անբավարար 82 և չներկայացած **56** /, որից լուծարքների ժամանակ մարվել են 88-ը, չեն մասնակցել 44-ը:

✓ 2022-23 ուս. տարում Ստոմատոլոգիական ֆակուլտետում ամառային քննաշրջանի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 94.0 %, իսկ որակականը՝ *63,0*%:

Ամառային քննաշրջանի ակադեմիական պարտքերի քանակը կազմում է 47 //անբավարար 25 և չներկայացած 22 /, որից լուծարքների ժամանակ մարվել են 16-ը, 31-ը չի մարվել:

Աղյուսակ 7

2022-23 ուս. տարի
ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Ձմեռային և ամառային քննաշրջանների
ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

| Կուրս, խումբ | Ձմեռային քննաշրջան | | Ամառային քննաշրջան | | Տարեկան առաջադիմություն | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդհ. առաջ.% | Որակ. առաջ.% | Ընդհ. առաջ.% | Որակ. Առաջ.% | Ընդհ. Առաջ.% | Որակ. Առաջ.% |
| I | *79.5* | *46.1* | *82.6%* | *42,4%* | *81,1* | *44,3* |
| 201 | 71.0 | 44.0 | *85,0* | *45,0* | *78,0* | *44,5* |
| 202 | 100 | 66.0 | *93,8* | *63,5* | *97,0* | *65,0* |
| II | *85.5* | *55* | 89.4 % | *54,3%* | *87,5%* | *55,0* |
| III | *76.5* | *47.2* | 95.5% | *53,3%* | *86,0* | *50,2* |
| IV | *100* | *100* | *100%* | *100%* | *100* | *100* |
| 501 | 89.0 | 59.0 | *100* | *66,0* | *94,5* | *62,5* |
| 502 | 100 | 55.0 | *100* | *71,0* | *100* | *63,0* |
| 503 | 87.0 | 35.3 | *100* | *52,2* | *93,5* | *44,0* |
| V | *92* | *49.8* | 100 % | *63,0%* | *96,0* | *56,5* |
| Ընդամենը | *86.7* | *59.6* | 94.0 % | *63,0%* | *90,1* | *61,1* |

Աղյուսակ 8

2022-2023 ՈՒՍ.ՏԱՐԻ
ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՔԱՆԱԿ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

| Ֆակուլտետ | Ձմեռային քննաշրջան | | Ամառային քննաշրջան | |
|---|---|---|---|---|
| | Անբավ./Չներկ. | Հանձ./Չհանձ. | Անբավ./ Չներկ. | Հանձ./Չհանձ. |
| Ստոմատոլոգիական | 82/56 | 88/ 50 | 25/22 | 16/31 |

✓ Այսպիսով, 2021-22ուս.տարվա համեմատությամբ / *86,7 %* ընդհանուր, *57,7%* որակական / 2022-23 ուս.տարվա Ստոմատոլոգիական ֆակուլտետի ընդհանուր և որակական առաջադիմությունները քիչ աճել են և կազմել *90,1%և 61,1%*:

✓ Ստոմատոլոգիական ֆակուլտետում համեմատաբար բարձր առաջադիմություն է գրանցվել 4-րդ /100 %/, 5-րդ /*96,0%*/ կուրսերում, որակական առաջադիմությունը բարձր է 4-րդ կուրսում:

➢ 2022-23 ուստարվա ձմեռային և ամառային քննաշրջաններում, համաձայն «Գիտելիքների ստուգման և գնահատման» կանոնակարգի, ըստ կուրսերի կազմակերպվել են և անցկացվել են նախորդ կիսամյակներից մնացած պարտքերի վերահանձնումները`

✓ Ձմեռային քննաշրջանում նախորդ 2021-22 ուստարվա ամառային քննաշրջանից ակադեմիական պարտք մնացած ատրկաներից անցկացվել են 5 ստուգարք և 8 քննություն, որոնց ժամանակ մարվել են թվով 17 ակադեմիական պարտքեր, իսկ չհանձնած 8 ակադեմիական պարտքերը հեռացված ուսանողներինն են:

✓ Ամառային քննաշրջանում 2022-23 ուստարվա ձմեռային քննաշրջանից

ակադեմիական պարտք մնացած առարկաներից անցկացվել են 4 ստուգարք և 8 քննություն, որոնց ժամանակ մարվել են թվով 19 ակադեմիական պարտքեր, իսկ չհանձնած 9 ակադեմիական պարտքերը հեռացված ուսանողներինն են:

Աղյուսակ 9

2022-2023 ՈՒՍ.ՏԱՐԻ

ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Նախորդ կիսամյակներից մնացած ակադեմիական պարտքերի վերահանձնումների արդյունքներ

| Ֆակուլտետ | Ձմեռային քննաշրջան 2021-22 ամառային քնն-ից պարտք | | Ամառային քննաշրջան 2022-23 ձմեռային քնն-ից պարտք | |
|---|---|---|---|---|
| | Ակ. պարտք | Հանձ./Չհանձ. | Ակ. պարտք | Հանձ./Չհանձ. |
| Ստոմատոլոգիական | 25 | 17 / 8 | 28 | 19 / 9 |

➢ 2022-23 ուս.տարվա Ստոմատոլոգիական և Բուժական ֆակուլտետների տարեկան ընդհանուր առաջադիմությունը կազմել է 88,0%, իսկ որակականը 60,5 %, ինչը նախորդ ուսումնական տարվա համեմատ մնացել է նույն տիրույթում:

Աղյուսակ 10

2022-23 ուս. տարի

ԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

| Ֆակուլտետ | Ձմեռային քննաշրջան | | Ամառային քննաշրջան | | Տարեկան առաջադիմություն | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ընդհ. առաջ. % | Որակ. առաջ.% | Ընդհ. առաջ.% | Որակ. առաջ.% | Ընդհ. առաջ.% | Որակ. առաջ.% |
| Բուժական | *83.0* % | *58.0%* | *88,3%* | 61,0 % | 86,0% | 60,0% |
| Ստոմատ. | *86.7* % | *59.6%* | 94.0 % | *63,0%* | *90,1%* | *61,1%* |
| Ընդամենը | 85,0 % | 59,0% | 91,1% | 62,0% | 88,0% | 60,5 % |

✓ Ըստ ժամանակացույցների կազմակերպվել են 2022-23 ուսումնական տարվա ձմեռային և ամառային քննաշրջանների լուծարքների I և II փուլերը, որի արդյունքները ներկայացվում են ստորև՝

Աղյուսակ 11

2022-2023 ՈՒՍ.ՏԱՐԻ

ԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՔԱՆԱԿ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

| Ֆակուլտետ | Ձմեռային քննաշրջան | | Ամառային քննաշրջան | |
|---|---|---|---|---|
| | Ներկ./ Չներկ. | Հանձ./ Չհանձ. | Ներկ./ Չներկ. | Հանձ./ Չհանձ. |
| Բուժական | 339/351 | 39/256 | 190/165 | 124/231 |
| Ստոմատ. | 82/56 | 88/ 50 | 25/22 | 16/31 |
| Ընդամենը | 421/407 | 127/306 | 215/187 | 140/262 |

➢ 2021-22 ուս.տարվա համեմատ 2022-23 ուս.տարվա բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների քննաշրջանների առաջադիմության արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ այս ուսումնական տարում ևս պետք է բարելավել որոշ «Մարդու անատոմիա», «Հյուսվածաբանություն,

էմբրիոլոգիա, բջջաբանություն», «Նորմալ ֆիզիոլոգիա», «Տեղագրական անատոմիա» դասընթացների դասավանդման որակները:

➢ 2022-23 ուսումնական տարում գերազանց և բարձր առաջադիմություն են ցուցաբերել ներքոհիշյալ ուսանողները՝

## ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

I կուրս

Ռաշ Հա Շեխ, Ադարշ Կումար Բուսսա, Կաննելլե Ռոզ - /101 խումբ/
Սրիրաջ Մուպպաթ, Դիկշիտա Մանգալապալլի - /102 խումբ/
Շահիլ, Վինայ Վինոդ Բհոիր /103 խումբ/
Ասլիյա Աբդուլ Համիդ Խան, Սանգրիթա Վենուգոպալ, Դիյա Ջանարդան Գաիկվադ /104 խումբ/

II կուրս

Մելրոն Ջոհան Պինտո, Աշնա Թոթթակկարա Բեյջի, Աբիյա Ցոհաննան, Վաիշնավի Ինդիրաա Ռաջիվ,Մարիյամ Ժաֆրան /201 խումբ/
Ջայասուրյա Թիրուպպաթի, Ջոել Սամսոն, Ջոսեֆ Սամուել Ջոն /202 խումբ/
Համզեհ Ղորբանի, Քրիստինա Ռոս - /203 խումբ/
Այոուշրի Մահեշ Չոնկար, Սյեդա Մունա Չիստի/204 խումբ/

III կուրս

Դելֆի Պոլաչան, Անջալի Ռաջենդրան Լաթա /301 խումբ/
Աջին Սունիլ Բաբու /302 խ./
Աբհինանդանա Բոբբի /303 խումբ/

IV կուրս

Շիվաթրիյա Կալլիդիլ Կալլավալապփիլ /401 խումբ/
Նիվեդիթա Ումեշ Բոլաշեթթի, Տուբա Ասիֆուր Ռեհման /402 խումբ/
Նադիա Նուրին Նուշադ, Սանա Ֆաթիմա Ակամ /403 խումբ/
Աշնա Ակզուստին /404 խումբ/
Մերլին Ռետնակումար Սրիլաթա /405 խումբ/

V կուրս

Աբդալլահ Հուսսամ Ջամել, Ալի Դիյաա Աբեդ Ալ Ջազա, Սիմոն Ջանե Դանիելս, Ռահո Ահմեդ Մոհամեդ, Ստեֆեն Ջազեֆ Ռաալջ, Օլուվաբունմի Էլիզաբեթ Ռամոն, Սամուել Ադոմահ /501 խումբ/
Անն Մարիամ Ցակոբ, Անիտտա Իգնատիուս, Կարվան Համզա Հասսան, Շերիա Անն Դանիալ, Սանդրա Ջոմի, Սոնու Թոմաս /502 խումբ/
Ռոհինի Պրաբհակար Ջաղբուկե /503 խումբ/
Աշիշ Գանեշ Բհոյր, Դիվյա Ռադհակրիշնա Փիլլաի, Սանգիթհա Սաջայան, Պուջա Պրակաշ Վաղ /504 խումբ/
Լալիտա Ռավիկալա Նաթհ, Մոնիկա Վալասա Նագա, Նազմա Ցաշվանտ Սոոե /505 խումբ/
Ջիյադ Տարիք Ջամալ Ալ-Բայաթի, Սոուջանյա Մոնիկա Ռաչարլա, Շերա Մարի Ռոյսոն,

VI կուրս

Ռաունեն Դլշադ Նադիր /601 խումբ/
Ամրութա Ռաջու, Էլնա Էլիաս, Ջանմին Ջոզեֆ /602 խումբ/
Դիպանիշ Պլանիվել, Տհաալիմա Ջեբբար Սաֆինա /603 խումբ/

## ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

I կուրս /101 խումբ/ - Համզա Իբրահիմ Խալիլ, Շադա Ղազի Ավվադ Ալ-Ջամել,
II կուրս /201 խումբ/ - Նազանին Էսքանդարի Մողադամ /202 խումբ/ Միլի Նանայան, Արմինե Անտոնյան, Անի Բաղալյան
IV կուրս /401 խումբ/Ահմադ Ամմար Ահմադ Դյաբ, Սիփան Արմին Կարա Բիտ
IV կուրս /402 խումբ Անիտտա Իգնատիուս, Անն Մարիամ Ցակոբ, Կարվան Համզա, Շերիա Անն Դանիել, Սոնու Թոմաս, Սանդրա Ջոմի /

V կուրս /501 խումբ/Հելիա Շահբազբորուջերդի, Ռաջիթ Սիվանաթիան, Ելիզավետա Տելեհինա, Մեհրդադ Բաբաք Ռադ,

502 խումբ Նվարդ Դարմանջյան, Երմոնյա Թաշյան, Ալինա Խոսրովյան, , Քրիստինե Պողոսյան, Լիլիթ Սարգսյան,

/503 խումբ/ Մետաքսյա Մարգարյան, Միխայել Դանիլյան, Կարեն Հունոյան, Վլադիկ Մարտիրոսյան, Արմինե Սահակյան

➢ 2022-23 ուստարում կան ուսանողներ, ովքեր ցուցաբերել են ցածր առաջադիմություն, ունեցել են ակադեմիական պարտքեր՝

## ԲՈՒԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

I կուրս

101 խումբ՝ Ալինա Նագուր Միրան, Ջոն Միլտոն,

102 խումբ՝ Ալթաֆ Մուհամմեդ Շաջի, Հարշան Փուլակկատտ, ,Անն Սամ Անի,

103 խումբ՝ Նանդանա Արինգալայան, Մոհամմադ Ահմադ Սուլեհման, Ախվարյա Սաջի, , Մոհամմեդ Աֆնան, Մուհանադ Համի Սալեմ Ալկսաբեհ, Սավիթա Թիրուպաթի, Յուսեֆ Սալահալդին Թահա /

104 խումբ՝ Միեֆ Արդին Խալեդ Մուհմման Էհիադի, Լաիթ Մոհամմադ Օբաիդուլլահ Սաաիֆիր,

II կուրս

201 խումբ՝ Ջոզոլ Ջոբի, Սահեր Իսայադ Սահափուլե Արդուլլահ Իբրալ Դեշմուխ

202 խումբ՝ Լոգեշվարան Կումար, Ախիլա Կալա Յուվրաջ Բասավրաջ, Մանիկանդան Մահալինգամ

203 խումբ՝ Իլայարիարաթի Բասկարան, Ռութ Սոսա Ջոսե, Յադհուկրիշնա Թարայիլ Պրադիպ, Նիթիշ

204 խումբ՝ Մոհամմեդ Աֆլահուլ Հաք Չոուդհուրի, Մուհամեդ Սուլթան Դարիպպուկոլլաթ

III կուրս

301 խումբ՝ Դիլշա Աշրաֆ Կիժեկկու Վիթթիլ, Մեթյու Ջեյմս, Ուզմա Միրզա , Ֆարիս Ահամեդ Պերումթարա Մոհամադ, Ֆարհանա Ֆայազ,

302 խումբ՝ Անսի Գիթա

303 խումբ՝ Հարշադ Ջահդաս Գաիկվադ , Ավս Մայթամ Ֆադհիլ Ալ-Ասադի

IV կուրս 405խումբ՝ Պարսա Աջայ Պատիլ

V կուրս 504 խումբ՝ Մերին Շաջի /

## ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

201 խումբ Ամիր Հոսսեյն Հոժաբր Աֆքան Քարիմ, Քահս Արդել Ռահման Հազա Էլեիմատ, ՄոհամմադԽալեդ Մուհմման Էհիադի, Մոհամմադահդի Միզազ

301 խումբ Մոհամմադ Բելալ Հուսսեին Արդել Հադի

9. 2022-23 ուսումնական տարում կազմակերպվել են «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրով ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորումները:

2022-23 ուս. տարում համալսարանն ունեցել է անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով շուրջ 117 շրջանավարտ՝

❖ «Բուժական գործ»՝ մասնագիտություն՝ 66

❖ «Ստոմատոլոգիա» մասնագիտություն՝ 51:

✓ Ստորև ներկայացվում են 2022-23 ուստարվա ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման արդյունքները՝

Աղյուսակ 12

2022-23 ուս. տարի

ԲՈԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

| N | Առարկա | Ընդհ.առաջ.% | Որակ. առաջ.% |
|---|---|---|---|
| 1. | Ներքին հիվանդություններ | 100 % | 53, 0 % |
| 2. | Մանկաբարձություն և գինեկոլոգիա | 96,3 % | 60,2 % |
| 3. | Վիրաբուժական հիվանդություններ | 88,9 % | 65,2 % |
| Ընդամենը | | 95,1 % | 59,5 % |

2021-22 ուս.տարվա համեմատությամբ բուժական ֆակուլտետի ավարտական ամփոփիչ ատեստավորումների որակական առաջադիմությունը համեմատաբար ցածր է՝ նախորդ տարվա 68,0 % դիմաց, այս տարի ուսանողները ցուցաբերել են 60,0 % որակական առաջադիմություն, համեմատաբար բարձր են եղել «Մանկաբարձություն և գինեկոլոգիա» / 60,2 % և «Վիրաբուժական հիվանդություններ» / 65,2 %/ առարկաների արդյունքները:

Որակական առաջադիմության վրա բացասաբար անդրադարձավ «Սուրբ Թերեզայի» անվան բժշկական համալսարանից նախորդ տարի տեղափոխված ուսանողների առաջադիմության որակական մակարդակը:

Բուժական ֆակուլտետի ամփոփիչ ատեստավորումներին թույլատրվել էին մասնակցելու թվով 69 ուսանողներ, սակայն դրանց շրջանավարտ ավարտեցին 66-ը, «Վիրաբուժական հիվանդություններ» առարկայից 3 ուսանող /Ակշիտա Խատկար, Ռահուլ, Նավդիփ Սինղ/ «անբավարար» ստացան, որոնք նախորդ ուստարում տեղափոխվել էին «Սուրբ Թերեզայի» անվան բժշկական համալսարանից: Այդ ուսանողներից մեկը՝ Ակշիտա Խատկարը, չմասնակցեց հաջորդ քննություններին և, մինչև քննությունների ավարտը, վերցրեց փաստաթղթերը:

2022 -2023 ուս. տարում «Բուժական գործ» մասնագիտության ամփոփիչ ավարտական քննությունների ընթացքում բարձր գիտելիքներ են ցուցաբերել հետևյալ ուսանողները՝

Շերա Մարի Ռոյմոն, Բաքեր Աքիլ Քարիմ Ալ-Բաղդադի, Զիյադ Տարիք Ջամալ Ալ-Բայաթի, Հարուն Ռաշիդ Դարվեշ Դարվեշ, Ռաուեն Դլշադ Նադիր Նադիր, Էլնա Էլիաս, Թանուջ Մուկեշկումար Շարմա Ջասմին Ջոզեֆ, Ջոսմին Անն Դիաս, Մնեհա Թոմաս, Դհարանիշ Պալանիվել, Տհասլիմա Ջեբբար Սաֆինա, Վանշիկա Ջուն, Մուսկան Չհաբրա, Ամրութա Ռաջու, Սոուջանյա Մունիկա Ռաչարլա, Նալյա Օլեթի:

«Բուժական գործ» մասնագիտության 1 շրջանավարտի՝ Շերա Մարի Ռոյմոնին շնորհվել է գերազանցության դիպլոմ:

Աղյուսակ 13

2022-23 ուս. տարի

ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

| N | Առարկա | Ընդհ.առաջ.% | Որակ.առաջ.% |
|---|---|---|---|
| 1. | Թերապևտիկ ստոմ.և մանկ.թեր.ստոմ. | *100 %* | *71,0 %* |
| 2. | Վիրաբուժական ստոմ. և մանկ.վիր.ստոմ. | *100 %* | *59,0 %* |
| 3. | Օրթոպեդիկ ստոմ.-գիա և օրթոդոնտիա | *100 %* | *76,5 %* |
| Ընդամենը | | *100%* | 69,0% |

2021-22 ուս.տարվա համեմատությամբ /81,0 %/ ստոմատոլոգիական ֆակուլտետի որակական առաջադիմությունը նվազել է: Ինչպես անցյալ ուստարում, այնպես էլ այս տարի, համեմատաբար բարձր է «Օրթոպեդիկ ստոմատոլոգիա և օրթոդոնտիա» և «Թերապևտիկ ստոմատոլոգիա և մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա» առարկաների որակական առաջադիմությունը: Որակական

առաջադիմության վրա, այս ֆակուլտետում նույնպես, բացասաբար է անդրադարձել «Սուրբ Թերեզայի» անվան բժշկական համալսարանից նախորդ տարի տեղափոխված 34 ուսանողների առաջադիմության որակական մակարդակը:

2022 -2023 ուս. տարում «Ստոմատոլոգիա» մասնագիտության ներքոհիշյալ շրջանավարտների մոտ և՛ տեսական և՛ կլինիկական մտածողությունը բարձր մակարդակի վրա էր՝ Մետաքսյա Մարգարյան, Կարեն Հունյան, Միխայել Դանիյան, Ալինա Խոսրովյան, Երմոնյա Թաշչյան, Մարիամ Աղամյան, Նվարդ Դարմանչյան, Արմինե Սահակյան, Լիլիթ Սարգսյան, Ալեքս Կարամանուկյան, Աննա Սաֆարյան, Վլադիկ Մարտիրոսյան, Զինա Միքայելյան:

«Ստոմատոլոգիա» մասնագիտության 1 շրջանավարտի՝ Մետաքսյա Մարգարյանին շնորհվել է գերազանցության դիպլոմ:

Ամփոփելով 2022-23 ուստարվա ամփոփիչ ատեստավորման առաջադիմության արդյունքներն արձանագրվեց, որ ընդհանուր առմամբ հանձնաժողովները զոհ էին ուսանողների գիտելիքներից: Նախորդ ուստարվա համեմատությամբ երկու ֆակուլտետների որակական առաջադիմության վրա բացասաբար էր անդրադարձել 2021-22 ուստարում «Սուրբ Թերեզայի» անվան բժշկական համալսարանից տեղափոխված ուսանողների առաջադիմությունը:

Աղյուսակ14

2022-23 ուս.տարի
ԲՈՒԺԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ
ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

| N | Ֆակուլտետ | Ընդհ.առաջ.% | Որակ.առաջ.% |
|---|---|---|---|
| 1. | Բուժական | 95,1 % | 59,5 % |
| 2. | Ստոմատոլոգիական | *100%* | 69,0 % |
| Ընդամենը | | 97,6 % | 64,3 % |

10. Երկու ֆակուլտետների ուսումնական պլաններով նախատեսված 2022-23 ուս.տարվա ուսումնաարտադրական պրակտիկաները իրականացվել են հաստատված ժամանակացույցերին համապատասխան, ուսանողները հանձնել են ստուգարքը:

11. Կազմակերպվել են նաև նոր ընդունված/տեղափոխված ուսանողների տարբերություն հանդիսացող ուսումնաարտադրական պրակտիկաները:

12. 2022-23 ուսումնական տարվա ընթացքում ունեցել ենք այլ բժշկական բուհերից, բժշկական քոլեջներից բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետների տարբեր կուրսեր ընդունված կամ տեղափոխված թվով 126 /բուժական 108 , ստոմատոլոգիական 18/ ուսանողներ:

✓ Ի տարբերություն նախորդ տարիների, հաշվետու տարում Բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում հայազգի ուսանողներից ձևավորվեցին երկրորդ կուրսեր՝ մեկական խմբերով, սակայն բուժական ֆակուլտետի խումբը ձմեռային քննաշրջանից հետո լուծարվեց:

Հաշվետու տարում Բուժական ֆակուլտետի երկրորդ կուրս են տեղափոխվել նաև Դուբայի "Success Point" համալսարանի առաջին կուրսն ավարտած ուսանողները, որի հետ ԱԲՀ-ն ունի պայմանագիր: Վերջիններս առարկայական տարբերություններ չեն ունեցել:

Բացի վերոնշյալներից, ուսանողների շարժունության այսպիսի քանակը պայմանավորված է նաև Ուկրաինայի վերջին դեպքերի, ինչպես նաև «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարանի» լուծարման հետ:

Այսպիսով,

Աշնանային կիսամյակ - 83 ուսանող

Բուժական ֆակուլտետ - 65

✓ 2-րդ կուրս 45 ուսանող */10 /հայ/ , 21 օտարազգի ուսանող, 14/"Success Point" /*
✓ 3-րդ կուրս 5 ուսանող
✓ 4-րդ կուրս 11 ուսանող

- ✓ 5-րդ կուրս՝ 4 ուսանող

Ստոմատոլոգիական ֆակուլտետ -18

- ✓ 2-րդ կուրս՝ 16 /հայ/ ուսանող , որից /1-ը այլ բժշկական բուհից/
- ✓ 3-րդ կուրս՝ 1 օտարազգի ուսանող
- ✓ 1 ներբուհական տեղափոխություն բուժական ֆակուլտետից ստոմատոլոգիական ֆակուլտետ:

Գարնանային կիսամյակ - 43 ուսանող

Բուժական ֆակուլտետ

- ✓ 2-րդ կուրս 3 ուսանող
- ✓ 3-րդ կուրս՝ 23 ուսանող
- ✓ 4-րդ կուրս 13 ուսանող
- ✓ 5-րդ կուրս՝ 4 ուսանող

Տեղափոխված ուսանողների համար վերհանված առարկայական տարբերությունների համար կազմվել է առարկայական տարբերությունների հանձնման ժամանակացույց, համապատասխան ամբիոններում «Տեղագրական անատոմիա և օպեռատիվ վիրաբուժություն», «Ախտաբանական անատոմիա», «Ճառագայթային ախտորոշում», «Վիրաբուժական հիվանդություններ», «Վնասվածքաբանություն և օրթոպեդիա» դասընթացներից և ուսումնաարտադրական պրակտիկաներից «Բուժքրոջ օգնական», «Մանիպուլյացիոն բուժքրոջ օգնական», «Բժշկի օգնական- թերապիա», «Բժշկի օգնական- վիրաբուժություն» կազմակերպվել են պարապմունքներ, մյուս առարկաներից՝ խորհրդատվություններ, և, համաձայն հաստատված ժամանակացույցի, ուսանողները հանձնել են այդ տարբերությունները:

- ✓ Հաշվետու տարում ռեկտորատ են ներկայացվել ըստ կիսամյակների ուսանողների շարժի, ինչպես նաև տարեվերջին՝ 2022-23 ուստարվա ուսանողների շարժունության՝ ներհոսքի մասին հաղորդումներ:

13.Հաշվետու տարում աշնանային և գարնանային կիսամյակներում անցկացվել են խորհրդակցություններ համալսարանում աշխատանքի ընդունված նոր դասախոսների հետ, որոնց ծանոթացվել են համալսարանի ուսումնական գործընթացին, համալսարանում գործող կարգերին, կանոնակարգերին:

14. Հաշվետու տարում Ռեկտորատի քննարկմանն են ներկայացվել զեկուցագրեր՝

- ✓ Որոշ ուսանողներին ուսման վարձի զեղչ հատկացնելու հետ կապված,
- ✓ ուսանողների հեռացման, ազատման, վերականգնման ներկայացնելու մասին ։
- ✓ «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» մասնագիտությունների 2022-23 ուստարվա ավարտական ամփոփիչ քննություններին թույլատրվող ուսանողների հետ կապված ,
- ✓ Ուսանողների կուրսից կուրս տեղափոխվելու նախագծերի կազմում և ներկայացում:

15.Համաձայն համալսարանում գործող «ԱԲՀ ուսանողների խրախուսման և ուսման վճարի մասնակի փոխհատուցման /զեղչերի/ տրամադրման» կանոնակարգի, 2022-23 ուստարում թվով 9 ուսանողների ուսման վարձը զեղչվել է /44-օրյա պատերազմի մասնակից, նույն ընտանիքից, միակողմանի ծնողազուրկ, բացարձակ գերազանց առաջադիմություն ցուցաբերած/:

16. Հաշվետու տարում պարբերաբար աշխատանքներ են իրականացվել կուրսերի խորհրդատուների հետ:

17.Մասնակցություն է ցուցաբերվել համալսարանի Կառավարման խորհրդի, Գիտխորհրդի, Ռեկտորատի նիստերին, ՈԱ, ՈՒԽ, ՈՒԳԸ և այլ հանձնաժողովների աշխատանքներին և համալսարանում կազմակերպված այլ միջոցառումներին:

18.Մասնակցություն համալսարանում գործող կանոնակարգերի մշակման աշխատանքներին: Հիմք՝ գիտխորհրդի արձանագրություն թիվ /«ԱԲՀ սովորողների շարժունության» կարգ/:

19. Հաշվետու տարում թվով 24 դասալսումներ են կատարվել համալսարանի ներքոհիշյալ ամբիոնների որոշ դասախոսների մոտ՝

❖ « Հումանիտար առարկաների» ամբիոն

✓ «Փիլիսոփայություն», «Հայոց լեզու», Լատիներեն, Անգլերեն դասընթացներ, դասախոսներ՝ Դ.Աղաբալյան, Ա.Գրիգորյան, Վ.Թումանյան, Տ.Խաչատրյան, Հ.Գյուլնազարյան:

❖ «Բնագիտական առարկաների» ամբիոն

«Ընդհանուր քիմիա», «Դեղաբանություն», «Բժշկական ինֆորմատիկա»,«Բժշկական ֆիզիկա» դասընթացներ, դասախոսներ բ.գ.թ. Ա.Գրիգորյան, բ.գ.դ. Ա.Մանուկյան Լ.Մարտիրոսյան ֆ.մ.գ.թ., դոցենտ Ա.Գրիգորյան:

❖ «Ստոմատոլոգիայի» ամբիոն

✓ «Դ/Ծ վիրաբուժություն», «Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա»,«Վիրաբուժական ստոմատոլոգիա»,«Օրթոպեդիկ ստոմատոլոգիա»,«Թերապևտիկ ստոմատոլոգիա» դասընթացներ, դասախոսներ՝ Ա.Զեյնալյան, Տ.Պետրոսյան, Է.Սարգսյան, Ա.Գևորգյան, Գ.Մանաշյան:

❖ «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոն

«Ախտաբանական անատոմիա», «Ախտաբանական ֆիզիոլոգիա» դասընթացներ, Դասախոսներ՝ Հուրի Միրաքեղարյան, բ.գ.թ. Լիլիթ Սուքիասյան:

❖ «Սոցիալական բժշկության» ամբիոն

«Հանրային առողջություն», «Իմունոլոգիա» դասընթացներ, դասախոսներ՝ Դավիթ Ղազարյան, Գայանե Մանուկյան:

❖ «Վիրաբուժական առարկաների թիվ 1 » ամբիոն

«Մանկաբարձություն և գինեկոլոգիա», «Վնասվածքաբանություն և օրթոպեդիա», «Անզգայացում և վերակենդանացում» դասընթացներ, դասախոսներ՝ Տաթևիկ Արշակյան, Ա.Ասատրյան, Վ.Գրիգորյան, Ա Սաֆարյան:

❖ «Վիրաբուժական առարկաների թիվ 2 » ամբիոն

«ԼՕՌ հիվանդություններ», «Վիրաբուժական հիվանդություններ» դասընթացներ, դասախոսներ Տ.Խալաթյան, Լ.Պետրոսյան, Հ.Օհանյան:

20. Համագործակցել ենք համալսարանի բոլոր ստորաբաժանումների հետ:

ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

➢ Մասնակցություն համալսարանի կայքի թարմացման և արդիականացման աշխատանքներին: Հիմք՝ գործող կայքը:

➢ Իրականացվել են Հանդիսավոր նիստերի հետ կապված աշխատանքներ ուսումնական տարվա մեկնարկին և շրջանավարտների դիպլոմների հանձնմանը նվիրված, որոնցում հանդես ենք եկել նաև ողջույնի խոսքով,

➢ «Կրթություն և կարիերա EXPO 2023» ցուցահանդեսին մասնակցելու հետ կապված կազմակերպչական աշխատանքներ,

➢ 2023թ. մայիսի 2-7-ը, Միջազգային համագործակցության շրջանակներում, մասնակցություն համալսարանի պատվիրակության աշխատանքներին, այցելություններ ԱՄԷ-ի մի շարք կրթօջախներ՝ Շարժայի «Success Point college», Աջմանի «Alshola American» դպրոցը և համալսարանի գործընկեր «Campus International» կազմակերպության Դուբայի մասնաճյուղ:

Այցելությունների նպատակն էր միջազգային համագործակցությունների ընդլայնումը, ուսանողների և դասախոսների շարժունության նոր հնարավորությունների ստեղծումը, փորձի փոխանակումը, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման շրջանակներում՝ դիմորդների հավաքագրումը:

➢ Մասնակցություն մարզամշակութային՝

- Համալսարանի ուսանողների մեծածավալ երեկոյի,
- Տրջանավարտների ավարտական հանդիսության,
- շախմատի մրցաշարի և այլ նմանատիպ միջոցառումների կազմակերպմանը:

Եզրակացություն, առաջարկություն

✓ Շարունակել բարելավել համալսարանի ընդունելության պլանավորումը՝ բուժական և ստոմատոլոգիական ֆակուլտետներում հայ ուսանողների թվաքանակն ավելացնելու նպատակով, և ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ՝ դիմորդների կայուն հոսքի և ուսանողների համակազմի պահպանման համար:

✓ Մտահոգիչ է ստոմատոլոգիական ֆակուլտետի դիմորդների տարեցտարի թվաքանակի նվազումը:

✓ Շարունակել ընդլայնել համագործակցությունը բազմապրոֆիլ և մասնագիտացված կլինիկաների հետ:

✓ Համաձայն համալսարանում գործող «Գիտելիքների ստուգման և գնահատման» կարգի, մինչև 12 կրեդիտ կազմող չմարված ակադեմիական պարտքերը ուսանողներն իրավունք ունեն վերահանձնելու հաջորդ կիսամյակի քննաշրջանի վերահանձնումների 2 փուլերի ընթացքում: Սակայն ավարտական կուրսերի ձմեռային քննաշրջանից և նրա լուծարքներից հետո ակադեմիական պարտք ունեցող ուսանողներին երկու վերահանձնումների համար կանոնակարգում որոշակի ժամանակ հատկացված չի:

✓ Շատ ուսանողներ ակադեմիական պարտքեր են ունենում նախորդ կիսամյակից, հաջորդում էլ ավելացնում են նորերը՝ կուտակելով մեծ քանակի պարտքեր:

Ակադեմիական պարտքերի երկրորդ փուլը սեպտեմբերին վերահարձնելու ընթացքում այդպիսի ուսանողները կամ դասերին անկանոն են մասնակցում, կամ էլ շատերն ուղղակի չեն հաճախում դասերին, և այդպես խաթարվում է ուսումնական նորմալ ընթացքը:

✓ Երկու ֆակուլտետների քննաշրջանների առաջադիմության արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ խիստ մտահոգիչ է որոշ՝ «Մարդու անատոմիա», «Տեղագրական անատոմիա» «Հյուսվածաբանություն», «Նորմալ ֆիզիոլոգիա» առարկաներից տարիներ շարունակ արձանագրվող ցածր արդյունքները, կարծում եմ մեթոդական տարբեր մոտեցումներ, եղանակներ օգտագործելով՝ պետք է բարելավել դասավանդման դրվածքը:

Նկատի ունենալով վերոնշյալը, առաջարկում եմ՝

✓ Ընդլայնել համագործակցությունը Հայաստանի Բժշկական քոլեջների հետ՝ լիցենզիայի շրջանակներում ապահովելով համալսարանի ստոմատոլոգիական ֆակուլտետի դիմորդների կայուն հոսք և թվաքանակ:

✓ Համալսարանում գործող «Գիտելիքների ստուգման և գնահատման» կարգի լուծարքներ բաժնում կատարելլրացում՝ ավարտական կուրսերի ձմեռային քննաշրջանից և նրա լուծարքներից հետո ակադեմիական պարտք ունեցող ուսանողներին երկու վերահանձնումների համար կանոնակարգում նշել կոնկրետ ժամանակահատված:

✓ Ամառային քննաշրջանի լուծարքների երկրորդ փուլը կազմակերպել օգոստոսի 22-31-ը:

ԴԵԿԱՆ Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ